# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4816-Ա « 28 » նոյեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի Հ.103-Ա, 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի Հ.2484-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԶՈՀՎԱԾ /ՄԱՀԱՑԱԾ/ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՄԱՆՎԵԼ ԳԱԳԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի ՎԴ/3681/05/22 վճիռը.

Գագիկ Խաչատրյանը հանդիսանում է զոհված Մանվել Գագիկի Խաչատրյանի հայրը և ՀՀ ՊՆ ԶԱՍՊՎՀԳՎ 08.09.2021թ. հ. 36/5796 տեղեկանքի համաձայն՝ շահառուն:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 38-րդ հոդվածով.

1. Անվավեր ճանաչել՝

1) Երևանի քաղաքապետի 2022 թվականի հունվարի 12-ի «Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքների բնակարանային հաշվառման դիմումները մերժելու մասին» հ.103-Ա որոշման հավելվածի 2-րդ տողը,

2) Երևանի քաղաքապետի 2022 թվականի հուլիսի 8-ի «Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքների բնակարանային հաշվառման դիմումները մերժելու մասին» հ.2484-Ա որոշման հավելվածի 1-ին տողը:

2. Զոհված /մահացած/ զինծառայող Մանվել Գագիկի Խաչատրյանի ընտանիքի անդամ՝ Գագիկ Գարուշի Խաչատրյանին ընդգրկել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման մասին ծանուցել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**